



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

## WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ՎԵՐԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱԶԳ. ՌՈԶ ԵՒ ԱԼԵՔ ՓԻԼԻՊՈՍ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՅԱՐԿԻՆ ՏԱԿ

### **ՀԱՅ ԴՊՐՈՑՆԵՐԸ ՓՈՔՐ ՀԱՅԱՍՏԱՆՆԵՐ ԵՆ, ՈՐՈՆՔ ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՈԳԻ ԿԸ ՆԵՐԱՐԿԵՆ ԱՃԱԿԵՐՏԻՆ**

*ՅԱՅՏԱՐԱՐԵՅ ԱՐԱՄ Ա. ՎԱԹՈՂԻԿՈՍ*

Հայ Դպրոցը փոքր Հայաստան է: Ցեղասպանութենէն ետք, ձեր հայրերն ու մեծ հայրերը սփիւռքի մէջ հաստատեցին, պահեցին ու պահպանեցին այս Փոքր Հայաստանները, որպէսզի անոնց ճամբով դուք՝ անոնց զաւակները կազմաւորուիք ազգային ինքնութեամբ ու զայն ամուր պահէք ձեր կեանքին մէջ: Դպրոցին ճամբով, դուք կը հաղորդուիք մեր պատմութեան անցեալի ու այսօրուան հերսերուն ու կերտիչներուն՝ Վարդան Մամիկոնեանի, Ղեւոնդ Երեցի, Նարեկացիի, Խրիմեան Հայրիկի պէս առաջնորդներու գործին, որոնք ոգի ու կեանք կու տան ձեզի: Հայ Դպրոցին մէջ ձեր ազգային ինքնութիւնը կը կերտուի. դուք կը ճանչնաք մեր պատմութեան տխուր երեսներն ալ. կը սորվիք, որ թուրքը մէկ ու կէս միլիոն հայ ջարդած է, մեզմէ խլած է մեր հողերը, որոնց համար, մենք կը մնանք պահանջատեր, պահանջատիրութիւն կը սորվիք այս դպրոցին մէջ: Դպրոցը մեզի համար նուիրական վայր է, յայտարարեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, խօսքը ուղղելով Ազգ. Ալեք Փիլիպոս Երկրորդ. Վարժարանի ու Մարի Փոստոյեան մանկամտորի աշակերտներուն, որոնք իրենց դաստիարակներուն հետ համախմբուած էին վարժարանի բակին մէջ, դիմաւորելու համար հայոց Հայրապետը:

Նկատի ունենալով, որ Հայ Դպրոցը առաջնահերթ տեղ կը գրաւէ հովուապետական այցելութեան օրակարգին մէջ, նաեւ ի մտի ունենալով որ 2011 տարին հռչակուած է Հայ Մանուկի տարի, Վեհափառ Հայրապետը իր այցելութեանց յայտագիրին մէջ լայն տեղ տրամադրած է մեր վարժարաններուն: Ինչպէս ծանօթ է, ան Չորեքշաբթի առաւօտուն այցելած էր Ազգ. Վ. Ե. Ա. Շամլեան վարժարանը, իսկ Հինգշաբթի առաւօտը տրամադրուած էր »Փոքր Հայաստան«ի սրտին կանգնող Ազգ. Ռ. Ե. Ա. Փիլիպոս վարժարանին:

Վեհափառ Հայրապետը վարժարան ժամանեց առաւօտեան ժամը 10ին եւ դիմաւորուեցաւ Տնօրէնուհի Տոքթ. Ալինա Դուրեանի, Մարի

Փոստոյեան Մանկամտուրի վարիչուհիին, անձնակազմի անդամներուն եւ դաստիարակներու կողմէ: Աշակերտները հաւաքուած էին բակին մէջ ու ծափողջոյններով, պաստառներով ու դրօշակներով դիմաւորեցին Վեհափառ Հայրապետը, որուն կողքին էին Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, հոգեւորականաց դասու անդամներ, Ազգ. Կեդրոնական Վարչութեան ու Թեմիս Ազգ. Վարչութեան ներկայացուցիչներ, հնամակալ Մարմինի ներկայացուցիչներ, վարժարանի Ուսումնական Մարմինի անդամներ, շրջանի Զ.Յ.Դ Գարեգին Նժդեհ կոմիտէի ներկայացուցիչը, աշակերտներու ծնողներ ու ներկայացուցչական այլ դէմքեր:

Աղ ու հացի օրհնութեան արարողութենէն ու հաւաքական աղօթքէ տեք, Վեհափառին ու շքախումբի անդամներուն ողջոյնի խօսքեր արտասանեցին վարժարանի փոխ տնօրէն Տիար Շարլ Լուսարարեան եւ Տնօրէնուհի Տոքթ. Ալինա Դուրեան: Անոնք շնորհակալութիւն արտայայտեցին Վեհափառին, որ այս պատմական օրը շնորհած է վարժարանին, վեր առին հայաշատ այս քաղաքին մէջ վարժարանին աւելի քան 40 տարիներու ծառայութիւնն ու աւանդը, ինչպէս նաեւ գոհունակութիւն յայտնեցին Հայաստանի հանդէպ հայրապետին հոգածու եւ նախանձախնդիր կեցուածքին համար, որուն նորագոյն արտայայտութիւնը եղաւ Հայաստանի վերնկախացման 20ամեակին առիթով անոր յայտարարութիւնները: Անոնք նաեւ կանգ առին հայ աշակերտներու հայակերտումին մէջ վարժարանի դերին առջեւ ու նշեցին, որ այսօրուան մանուկը վաղուան հայրենիքին տէրն ու կերտիչն է:

Իր խօսքը արտասանելու հրաւիրուեցաւ Առաջնորդ Սրբազանը, որ նկատեց, թէ դաստիարակներուն արտայայտութիւններն ու աշակերտներուն խոստմնալից ներկայութիւնը համապատասխան են Վեհափառ Հայրապետի պատգամներուն ու կոչերուն ընդառաջումի: Ան յիշեցուց, որ հովուապետական այս այցելութեան գլխաւոր առանցքներէն մէկը՝ Հայ Դպրոցն է, որ կը վայելէ Նորին Ս. Օծութեան յատուկ հոգածութիւնը, ապա հրաւիրեց Վեհափառը՝ ուղղելու իր պատգամը:

«ԱՇԱԿԵՐՏԻ ԿԵՐՏՈՒՄԻՆ ՃԱՄԲԱՆ  
ՀԱՅ ԴԴՐՈՑՆ Է»

Մասնաւորաբար աշակերտներուն ու դաստիարակներուն լողղելով իր խօսքը՝ Վեհափառ Հայրապետը վեր առաւ փոքր հայրենիք ըլլալու հայ դպրոցին արժանիքը եւ ազգային ինքնութեան կերտումին մէջ անոր դերը: Անոր ուշադրութենէն չվրիպեցան վարժարանի պատերուն գետեղուած պաստառներ, որոնցմէ մէկուն վրայ արձանագրուած էր «Ազգի ապագան կը կերտուի հայ դպրոցին մէջ», իսկ երկրորդի մը վրայ արձանագրուած էին »Քաջութիւն, Նկարագիր, Ինքնավստահութիւն եւ Յանձնառութիւն« բառերը: Վեհափառ Հայրապետը դիտել տուաւ, որ անոնք սոսկական բառեր չեն, այլ հայ դպրոցին առաքելութիւնը՝ հայակերտումի, հայապահպաման ու մարդակերտումի գործին սեղմ արտայայտութիւններն են, որովհետեւ հայ դպրոցը, աշակերտին ուսում ու գիտելիք ջամբելու կողքին, նաեւ կը կերտէ նկարագիր, անոր կը ներշնչէ ազգային պահանջատիրութեան կամքը՝ այդ

պահանջը թուրքին ներկայացնելու խրախոյսը: «Ուրախ պետք է ըլլաք, որ հայ դպրոցի աշակերտներ եք. ըսեք բոլորին, որ հայ աշակերտին կերտումին ճամբան հայ դպրոցն է, այլ ճամբաներ հայը կը հեռացնեն ազգէն ու հայրենիքէն», շեշտեց Վեհափառ Հայրապետը, որ իր խօսքը եզրափակեց գնահատանք արձանագրելով տնօրէնութեան, դաստիարակներուն, անձնակազմին եւ հոգատար մարմիններուն ու բարերարներուն:

Պաշտօնական յայտագիրի աւարտին, աշակերտական խորհուրդի ներկայացուցիչն ու Տնօրէնուհին յուշանուէրներ յանձնեցին Վեհափառ Հայրապետին, որ իր կարգին յուշանուէր մը յանձնեց Տնօրէնուհիին:

## ՄԱՐԶԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Տնօրէնութիւնը տարբեր բնոյթի ընդունելութիւններ կազմակերպած էր Վեհափառին ու շքախումբին համար: Աղօթքի ու խօսքերու յիշեալ պահէն ետք, Վեհափառին ներկայացուցաւ աշակերտներու արուեստի գործերէն բաց ցուցահանդէս մը՝ եկեղեցիներու մանրակերտներ, որոնք տեղադրուած էր բակին մէջ: Վեհափառ Հայրապետն ու ընկերակիցները աչքէ անցուցին այդ գործերը, բարձր գնահատելով աշակերտներն ու զանոնք արուեստի ուղիներուն մէջ առաջնորդող դաստիարակները:

Ընդունելութեան յաջորդ բաժինը կազմակերպուած էր վարժարանի մարզարանին մէջ. աշակերտները հանդէս եկան արտասանութիւններով, երգով ու պարով: Կարգ մը աշակերտներու առիթ տրուեցաւ անկեղծ արտայայտութիւններ ունենալու: Անոնք բարեմաղթութիւններ, ողջոյն ու հարցումներ լողդեցին Վեհափառ Հայրապետին:

Հանդիսութիւնը վերջ գտաւ աշակերտական խումբի մը կողմէ «Կիլիկիա» երգով, որուն միացան բոլոր ներկաները:

## ՀԱՆԳԱՆԱԿԱՅԻՆ ԶԱՅԼԱՐՇԱԲ

Վեհափառն ու շքախումբը ապա վերադարձան բակ, ուր աշակերտները խմբուած էին ու պատրաստ՝ քայլարշաւի:

Առաջնորդ Սրբազանին աղօթակցութեամբ, Վեհափառ Հայրապետը կտրեց քայլարշաւին ժապաւենը: Մանուկ ու պատանի աշակերտներ քայլարշաւ մը կազմակերպած էին հովուապետական այցելութեան առիթով, իբրեւ գործնական արտայայտութիւն՝ Հայ Մանուկի տարուան տօնախմբութեան: Ուսուցիչներուն առաջնորդութեամբ, աշակերտները ճամբայ ելան դպրոցէն, քալելու համար Փոքր Հայաստանի փողոցներէն, կտրելու 5 ըլմ. տարածութիւն ու վերադառնալու դպրոց:

Հանդիպումը վերջ գտաւ տնօրէնութեան կողմէ կազմակերպուած պատշաճ հիւրասիրութեամբ, որ առիթ եղաւ սրտբաց գրոյցի՝ այս ու առհասարակ հայկական մեր վարժարաններու առաքելութեան, դիմագրաւած մարտահրաւերներուն ու յարակից հարցերու մասին: Այդ հանդիպումին, տնօրէնուհին՝ Տոքթ. Ալիսա Դուրեան Վեհափառ Հայրապետին յայտնեց, թէ նոյն պահուն տեղի ունեցող քայլարշաւը հանգանակային բնոյթ ունէր. աշակերտները վերջին շաբաթներուն անձամբ դիմած էին իրենց հարազատներուն, որպէսզի խորհրդանշական

գումարներով հովանաւորեն իրենց քայլարշաւը: Այսպէսով, ապահովուած է 35 հազար տոլարի կոկիկ գումար մը...

Յրաժեշտի պահուն, տնօրէնուհին ու վարժարանի այլ ներկայացուցիչներ անգամ մը եւս շնորհակալութիւն յայտնեցին Վեհափառին, այս շնորհաբեր այցելութեան համար:

## **HIS HOLINESS CATHOLICOS ARAM I VISITS PILIBOS SCHOOL**

On the morning of Thursday, October 13, 2011, His Holiness Catholicos Aram I arrived at Rose and Alex Pilibos School where he was greeted by Principal Dr. Alina Dorian, Director of ARS Mary Postoian School Mrs. Takouhey Saatjian, faculty, and students who were gathered in the courtyard to enthusiastically welcome His Holiness to their school.

His Holiness was accompanied by H.E. Archbishop Moushegh Mardirossian, prelate, Clergy and Council members, and participating in the visit were members of the Board of Regents, School Board, ARF Karekin Njtech Gomideh, and parents.

After the traditional blessing of salt and bread and a collective prayer, Vice-Principal Charles Loussararian and Principal Dr. Alina Dorian welcomed His Holiness and expressed their gratitude for his visit.

The Prelate emphasized that the institution that is the Armenian School is a focal point of the Pontifical Visit and one of the top priorities of His Holiness, and invited the Pontiff to share his message.

His Holiness delivered an inspiring and motivational message in which he stressed that the Armenian School is where the future of our nation is built. He spoke of the Armenian School as a place where faith and heritage are fostered, where character is built, the bedrock and foundation on which our nation is built, and concluded by commended the administration, faculty, and affiliated bodies for their service to our students.

After taking a brief tour of the school and witnessing the artwork prepared for him by the students, His Holiness and entourage headed to the school gym where students presented a cultural program of recitations, song, and dance. A few students were also given the opportunity to ask their candid questions to His Holiness.

The program came to a close with the singing of the Cilician anthem by the students.

His Holiness and entourage headed back out to the courtyard where the students assembled to kick off the school's first ever Walk-a-Thon. The 5 kilometer long Walk-a-Thon began with the cutting of the ribbon by His Holiness.

A reception in honor of His Holiness followed, during which a discussion on various issues took place. "We are grateful to our Prelate, His Eminence Archbishop Moushegh Mardirossian, who graciously obliged our request to

arrange for the Pilibos family to be graced by His Holiness' blessings, on this important occasion" said Dr. Alina Dorian.